

## Արձանագրություն №2/2020-2021

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2020թ. հոկտեմբերի 22-ին տեղի ունեցած թիվ 2 առցանց նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 70-ը (յոթանասունը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանը:

Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Օրակարգում ընդգրկված միակ հարցը վերաբերում էր 2020/2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի 1-ին ընթացիկ քննության անցկացման ժամկետի փոփոխությանը, որով նախատեսվում էր ընթացիկ քննության անցկացումը հետաձգել մեկ շաբաթով՝ հաշվի առնելով կիսամյակի դասերը երկու շաբաթ ուշացումով սկսելու հանգամանքը: Մինչ օրակարգային հարցին անցնելը, ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանը գիտական խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ուսանողական խորհրդի 19 անդամի կողմից առաջարկ է ներկայացվել առաջին կիսամյակում ընթացիկ քննությունները չեղարկելու վերաբերյալ, ուստի նպատակահարմար կլինի այդ առաջարկի քննարկումը գիտական խորհրդի նիստում: Գիտական խորհրդի սովորող անդամ Բ. Մաթևոսյանը, անդրադառնալով ուսանողական խորհրդի անդամների կողմից ներկայացված առաջարկին, նկատեց, որ ընթացիկ քննությունների մեկ շաբաթով հետաձգելու և նոյեմբեր ամսվա սկզբին անցկացնելու հարցը մեծ դժգոհություն էր առաջացրել ուսանողության շրջանում, քանի որ պատերազմական իրավիճակով պայմանավորված շատ դեպքերում հնարավոր չէր լինի պատշաճ պատրաստվել և մասնակցել քննություններին: Վերջինս առաջարկեց գտնել միջանկյալ այնպիսի լուծում, ինչը հնարավորություն կտա չվնասելով բնականոն ուսումնական գործընթացը՝ հաշվի առնել նաև ուսանողության շրջանում ի հայտ եկած մտահոգությունները:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանն առաջարկեց նիստի օրակարգում ընդգրկել 2020/2021 ուստարվա առաջին կիսամյակում ընթացիկ

քննությունները չեղարկելու մասին հարցը, ինչը քվեարկության արդյունքում ընդունվեց 50 կողմ, 2 դեմ, 6 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանը հարցի առնչությամբ նշեց, որ պատերազմական իրավիճակում ճակատում և թիկունքում հազարավոր մարդիկ կատարում են իրենց պարտքը, թիկունքում աշխատելով՝ ապահովում թիկունքի ամրությունը: Վերջինս գուգահեռներ անցկացրեց 1990-ականների սկզբներին արցախյան գոյամարտի տարիների հետ՝ նկատելով, որ դժվարին ու ծանր այդ տարիներին ոչ մեկի մտքով չէր անցնում դադարեցնել ուսումնական գործընթացն ու չեղարկել քննությունները՝ ընդգծելով, որ կրթական գործընթացի ու որպես դրա կարևոր բաղադրիչ համարվող գիտելիքի գնահատման համակարգի կասեցումը, բոլորի կրթություն ստանալու իրավունքի դադարեցումն անթույլատրելի է: Նա նաև նշեց, որ ռազմաճակատում շատ ուսանողներ, կամավորներ են մասնակցում, որոնց համար ուսումնական գործընթացին մասնակցությունն անհնար է: Ուստի, հարգելի պատճառներով ուսումնական գործընթացին և հատկապես քննություններին նրանց չմասնակցելը կհամարվի հարգելի, առանձին-առանձին կդիտարկվեն բոլոր հարգելի պատճառները և լրացուցիչ մեխանիզմներ կստեղծվեն նրանց կողմից հետագայում քննությունների հանձնման համար: Արձագանքելով Գ. Գևորգյանի մոտեցմանը՝ Դ. Մաթևոսյանը մեծամասամբ ընդունելի լուծում համարեց, սակայն առաջարկեց ընթացիկ քննությունների շուրջ ստեղծված բացասական մթնոլորտի մեղմման և ուսանողներին ընդառաջ գնալու տեսանկյունից ևս որոշ ժամանակով հետաձգել քննությունների անցկացումը: Ի պատասխան՝ Գ. Գևորգյանը նշեց, որ ընթացիկ քննությունների թիվը կրճատվել և հասցվել է 3-ի: Բացի այդ, քննությունների նախատեսվող ժամկետին մոտ կես ամիս ժամանակ կլինի, ինչը հնարավորություն կտա ուսանողին պատրաստվել 3 ընթացիկ քննություններին:

Ուսանող անդամ Ն. Մարգարյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք կամավորական տարբեր աշխատանքներում ներգրավվածության համար հարգելի պատճառ համարելու հարցում ուսանողների ներկայացրած դիմումների դիտարկման պարագայում հավաստիության ստուգման լրացուցիչ խնդիրներ, անորոշություններ ու բարդություններ ի հայտ չեն գա: Ի պատասխան հարցադրմանը՝ Գ. Գևորգյանը նշեց, որ դեկանատների և ուսանողական խորհրդի ակտիվ մասնակցությամբ հնարավոր է իրականացնել ստուգման մեխանիզմներն ու գործընթացը: Ուսանող անդամ Մ. Վարդումյանը հարցի առնչությամբ նշեց, որ ուսանողների փաստարկներից մեկը պատերազմական իրավիճակով պայմանավորված դժվարություններն են, մյուսը՝ e-learning համակարգի թերացումների պատճառով տեղ գտած դասապրոցեսի խաթարումները: Գ. Գևորգյանը ի պատասխան նկատեց, որ համակարգի խաթարումները հատվածային են եղել և դասապրոցեսը մեծամասամբ իրականացվել է, ուստի քննություններն անց են կացվելու միայն դասավանդված թեմաների շրջանակում, և բացառվելու են այն քննական հարցերը,

որոնք դուրս են մնացել դասախոսություններից: Անդրադառնալով վարձավճարների խնդրին՝ վերջինս նկատեց, որ ընթացիկ քննություններին մասնակցության իրավունք են ունենալու այն ուսանողները, ովքեր վճարած կլինեն կիսամյակի համար սահմանված վարձավճարի 25 %-ը:

Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը ճիշտ համարեց ընթացիկ քննությունների անցկացումն ու ուսումնական գործընթացին չվնասելը՝ մինչույն ժամանակ մտահոգություն հայտնելով հետագայում առավել բարդ իրավիճակների ստեղծման առումով: Վերջինս չբացառեց ընթացիկ քննություններին ուսանողության մոտ 1/3 կամ 1/4 մասի մասնակցության հավանականությունը՝ կարևորելով հնարավոր բարդ իրավիճակներում պատրաստ լինելու և լուծումներ գտնելու անհրաժեշտությունը:

Ամփոփելով հարցի առնչությամբ ընթացած քննարկումը՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանը ներկայացրեց, որ առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների թիվը ընդհանուր առմամբ նվազեցվում է՝ բացառությամբ մի քանի ֆակուլտետների, որոնք իրենք են նպատակահարմար գտնել ուսանողների հետ համաձայնությամբ պահպանել ուսումնական պլանով նախատեսված քննությունների թիվը: Բոլոր ուսանողները, ովքեր հիմնավորված կներկայացնեն քննություններին չմասնակցելու հարգելի պատճառներ, հետագայում առանձին կկազմակերպվի նրանց համար անհրաժեշտ խորհրդատվություն և քննություն: Հիմնավոր ու հարգելի պատճառներով կիսամյակի համար սահմանված վարձավճարի անհրաժեշտ չափը չվճարելու պարագայում բոլոր այդ դեպքերն առանձին-առանձին կդիտարկվեն: Առաջին կուրս ընդունվածների համար պարտադիր է կիսամյակի վարձավճարի 25 տոկոսի վճարումը՝ որպես ուսանող հրամանագրվելու համար:

Անցկացվեց օրակարգի հարցերի բաց քվեարկություն:

**Լսեցին.** - 2020/2021 ուստարվա առաջին կիսամյակում ընթացիկ քննությունները չեղարկելու մասին:

**Որոշումը** չընդունվեց 18 կողմ, 40 դեմ, 2 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ:

**Լսեցին.**- 1-ին ընթացիկ քննության անցկացման ժամկետը 2020/2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տեղափոխելու և ս/թ նոյեմբերի 2-7-ը անցկացնելու մասին:

**Որոշեցին.**- «ԵՊՀ Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» 3.3.3 կետով սահմանված 1-ին ընթացիկ քննության անցկացման ժամկետը 2020/2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տեղափոխել և սահմանել ս/թ նոյեմբերի 2-7-ը:

Որոշումն ընդունվեց 55 կողմ, 3 դեմ, 4 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ:

**Լսեցին.**- ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի «Մերձավորարևելյան հետազոտությունների կենտրոն» ստեղծելու մասին:

**Որոշեցին.**- Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի «Մերձավորարևելյան հետազոտությունների կենտրոն» ստորաբաժանում ստեղծելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին:

Որոշումն ընդունվեց 56 կողմ, 1 դեմ, 3 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ.Ս. Հովսեփյան

26.10.2020թ.